

ՏԱՍՆՍԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գին 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ախալքալա-
քից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:
Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՎԱՅԱՆՔԻՆ

Սեպտեմբերի 14-ին

Խնդրում եմ այս նամակիս տեղ չնորսել ձեր
ազգայնական (Վշակ) լրագրում, որպէս յաւելում
նոր լրագրի ներկայ տարվայ № 145 մէջ տպւած
պ. Մատանկովանցի յօդուածին:
Ախալքալաքի գաւառի գիւղերը բաժանված են
տասն չինական հասարակութեանց, որոնցից մի-
նը, այն է Արաբկայի հասարակութեանը, բաղկա-
ցած է զուգորդների ուսուսողականներից և
որոնք, ճշմարտան առած, պահում են իրանց
բարոյականութեան մէջ: Շատ քիչ անգամ պա-
տահում են նրանց մէջ գործութիւններ և ուրիշ
տեսակ անցքեր, և այդ վերաբերում եմ նրանց
ընտրած հասկացող և գործունեայ տանուտէրերի
բարձր կարգադրութիւններին, նոյնպէս և նոցա
վարձած արժանաւոր գրագրի չնորսին, որը հա-
կացնում է նրանց անբարոյականութիւնների վատ
հետեանքները: Թէև նրանց մէջ չափազանց տա-
րածվել էր օդի գործածելը, բայց այս վերջին
ախտն ևս միայն ժամանակներում մեծ մասամբ
արմատախիլ եղած չնորսի նոյնպէս յիշեալ տա-
նուտէրի, որը կազմել տալով հասարակական
վճիռ, գիւղերում արգելել է գինեւորների բացանելը,
ինչպէս առաջ կային աղաքիւղը և չը նայելով,
որ ներկայումս տրանզիտի ճանապարհին վրա
գտնվող մի երկու գիւղերում կան գինեւորներ—
բայց այնու ամենայնիւ զուգորդներին արգելված
է յաճախել այն տեղերը խմելու գործածելու
համար: Չը կատարողները ենթարկվում են տու-
գանայ յօդուած իրանց հասարակութեան: Յան-
կալի է, որ այդպիսի օրինակների հետեւին և
մնացեալ հասարակութեանց գիւղերի բնակիչները,

որոնց մեծամասնութիւնը հայերից է բաղկացած,
բայց ցաւելով պէտք է ասել, որ նրանք չառ և
չառ հեռու են մնացել բարոյականութեան մէջ,
չը նայելով, որ 14 տարի է նրանց տրված է
գիւղական կանոնադրութիւնը. կովկասեան փո-
խարքայից 11-ն ապրիլի 1865 ամի հաստատված,
որով նոցա համարեա կատարեալ հասարակա-
կան կառավարութիւնների արտօնութիւններ ու-
նեն: Բայց չը նայելով և չը ճանաչելով իրանց
իրաւունքները, ընդհակառակն են գործում. ամեն
մի գիւղ իշխանութեան կարգադրութեամբ ու-
ղարկված է մի մի օրինակ վերալիշեալ կանոնա-
դրութիւնից, որի կէտը ուսուսող և կէտը հայե-
րէն է դրված, բայց ովքեր են կարգադրողները—
ոչ ոք: Ամեն մի չինական վէճի համար այս և այն
կողմերն են ընկնում, փողեր են ծախսում և ու-
լիշ չեն օգտուում: Օրինակ, մի գիւղում բնակիչ-
ների մէջ պատահում են հողեր բաժանելու մա-
սին վէճեր և այլն, որոնք մի քանի կուսակցու-
թեան բաժանվելով դիմում են իրանց տանուտէ-
րին՝ նրա օրինաւոր կարգադրութեանը, բայց այս
վերջինս անգործեալ լինելով և օրէնքների վրա
տեղեկութիւն չունենալով, մի պատուական չի-
նացնում է իրանց այդ մտորութիւններին, որոնք
տեսնելով որ տանուտէրն ևս չըստացան իրանց
խնդրած կարգադրութիւնը, ամեն մի կուսակցու-
թիւն ընտրում է իր միջից մի քանի հաւատա-
մատար անձինք, իրաւունք տալով որոնց չա-
րունակելու այդ վէճերը բարձր գաղափարաւորու-
թեան: Հաւատարմատարները օգուտ քաղելով սրա-
վում սկսում են իրանց գործունէութիւնը, ուղեւոր-
վում են քաղաքները, գրաւոր խնդիրներով դի-
մում են գաւառական և նահանգական վարչու-
թիւններին, մեծ ծախսեր են անում, օրերով միա-
լով քաղաքների զինաներում, խնդիրների պա-
տասխանները ստանալու համար: Բայց ի դուր-
մի երկու օր գաղափարաւորների և կառավարու-
թիւնների ղեկավարում սպասելուց յոյսերը, կտրած,
վերադառնում են գիւղ, ամենից առաջ հաշիւ են
տալով հասարակութեանը այսպէս օրինակ. իրեն-
դիր զրկել տալու փող տուելը 20 ռուբլ, մարկա-
ների փող 5 ռուբլ, հինգ օր քաղաքը կեցանք չո-
րըս հողով ծախս ըրինք 32 ռուբլ, 50 ռուբլ էլ
տուելը այս ինչ ծառայողին գործերին վերահա-
սու լինելու: Սրա վրա աւելացնելով մի քանի
տասնեակ մանէթներ յօդուած իրանց գրաւանքին,

որպէս վարձատրութիւն իրանց աշխատութիւն-
ների, և անա գոյանում է մի անաղին գումար,
որպիսին և պահանջվում է հասարակութիւնից:
Ինչո՞ւ գիւղացիները մի խօսք անգամ չեն համար-
ձակվում ասելու, որովհետեւ այդպիսի դէպքերում
նրանք չառ փորձված են. իսկայն սա լիա՞ն *) ա-
նելով հաւաքում են այդ օրինաւոր համարված
հաւատարմատարների արած ծախսերը, վճարում են
նրանց, բայց ասա մի քանի օրից յետոյ ստանում
են նրանց տուած խնդիրների պատասխանը, թէ այդ-
պիսի վէճերը, գիւղական կանոնադրութեան այս
ինչ յօդուածի համաձայն, պատկանում են հաւա-
քական ժողովի կամ չինական դատաւորների
ընտրութեանը և վճարելու, ուստի և խնդիրները թո-
ղած են առանց հետեանայ: Այս բոլոր գործու-
ղութիւններից յետոյ հաղի հաղ հասկանում են
իրանց սխալը և ունեցած իրաւունքները: Վեր-
ջապէս կթէ նրանք ունենալին հասկացող պաշ-
տօնատարներ, որոնքունայ տանուտէրեր և հաւա-
կացող գրագիրներ, այս վերջիններիս էլ օրինա-
ւոր կերպիւ վարձատրելին, մեծ օգուտներ կարող
էին ունենալ, բայց ընդհակառակն նրանց տա-
նուտէրն ու գրագիրները (բացի մի երկու հա-
տարակիսան գրագիրներից), իրանք կարօտ են
սովորելու: Ինչպէս կարող են ուրիշներին սովո-
րեցնել. ինչ էլ որ անեն հրաշք պէտք է համա-
րել: Գիւղացիք հարստահարվում են և բարոյա-
պէս ճնշվում են անհոգութեան և տղիտութեան
երեսից, ժամանակ է նրանց մասին հողաւ, քըն-
նել նրանց գործունէութիւնները և մի որ և իցե
կերպով ազատել նրանց և նրանց ազադալ սե-
րնդին խաւար տղիտութիւնից: Գիտութեան լոյսն
է որ մարդուս աւելը բաց է անում և պարզ ցոյց
է տալիս թէ ինչ տղիտութեան խաւարի մէջ է
կեղծ մարդկութիւնը իր գոյութեան գանաղան
բաղկանքում: Գիւղացին ոչ մի գիտութիւն չու-
նի, բայց գիտութիւնը օրեցօր նրա կեանքի ան-
հրաժեշտ պայմանն է գտնուում: Գիւղացին գի-
տութիւն ստեղծել չէ կարող, նրան հարկաւոր է
ստեղծելու, գիւղացու ազադալ գրութիւնը ու-
սումից է կախված, իսկ նրա տարածելը զարգա-
ցեալ ինտելիգենցիայի պարտքն է: Միեւն և որ ին-
տելիգենցիան գիւղացուն չը մօտենայ, մինչև նա

մօտիկից չը նայէ գիւղացու բնական և տըն-
տեսական կեանքին, մէկ խօսքով մինչև նա չը
միանայ գիւղացու հետ և մանրամասն չը հետա-
զօտէ նրա կեանքը, նա չէ կարող կրթք որ և
իցէ օգտուէ միջոց առաջարկել գիւղացուն զար-
գացնելու համար, ուրեմն չէ էլ կարող մի իրա-
կան օգուտ բերել ժողովրդին և երկրին: Չը մո-
ռանալք, որ այս նպատակին ծառայելը զարգա-
ցեալ ինտելիգենցիայի յատուկ պարտականու-
թիւնն է:

Մի քանի խօսք ևս Ախալքալաքի հասարակու-
թեան վերաբերութեամբ: Տեղիս հայոց երկսեռ
ուսումնարանները գտնվում են այժմ աննախա-
նկելի դրութեան մէջ. նրկական միջոցներ չու-
նենալու պատճառով կարելի է սպասել նրանց
օրհասականին հասնելու: Այս մասին հասարա-
կութիւնը չէ էլ կամենում խորհել: Մինչև այս օրս
մեր ուսումնարանները փակված են, ուսուցիչնե-
րի բացակայութեան պատճառով, որոնք գտն-
վում են ուսուցչական ժողովում, իսկ աշակերտ-
ները օգուտ քաղելով վերալիշեալ հանգամանքից
թախառում են փողոցներում և ձորերում, բայց
նրանց ծնողները ուշադրութիւն անգամ չեն դարձ-
նում այդ բանի վրա, որ ազատէին իրանց որ-
դոց փողոցներում անպատակ թախառնելուց: Սո-
րանից մի քանի օր առաջ ընտրվեցան նոր հոգա-
բարձուներ տեղիս հայոց երկսեռ դպրոցների հա-
մար. պ. պ. Ա. Գրիգորեանց, Կ. Նալբանդեանց
և Յ. Յովհաննէսեանց: Յանկալի է, որ նոցա ի-
րանց երկտարարական ջերմ աշխուժով գործէին
և հոգային ուսումնարանների դրութեան մասին,
առաջարկէին հասարակութեան դրամական օժան-
դակութիւններ անելու վերալիշեալ ուսումնարան-
ներին և այդպիսով նպաստէին հարկաւոր աշ-
ակերտների առաջադիմութեանը և ընդարձակէին
ուսման ասպարէզը:

Աւելորդ չեմ համարում յիշեցնել ինչպէս պ. պ.
հոգաբարձուներին, նոյնպէս և Ախալքալաքի հա-
սարակութեանը, որ նոցա հասարակական վճռով
1876 թ.ին կարգաւորել էին ունենալ քաղաքումս
պրիստովի օդական, իսկ 1878 թ.ում պրիստով:
Երկու պաշտօններն էլ ներկայումս գոյութիւն ու-
նեն, այդ պաշտօնաններից տապիր ստանում է
նոսիկ քաղաքի արկղից տարին 516 ռուբլի, իսկ
վերջինս 720 ռուբլի, այն ինչ 1877—78 ուսու-
սաճական պատերազմի իւրեւում ունէինք մի-

*) Սալիան տաճիկերէն բառ է, հայերէն նշա-
նակում է հաշուութիւն, ուսուսիւն բաճաճաճա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ ԱՐԳՈՒՆԵՆԻ ԳԱՒԱՌՈՒՄ

Գ.

Գաղթական թիւերը երկու միացած
հոգեւոր.

Մինչև հիմայ յիշվածներից պէտք է եզրակաց-
նել, որ 1) Արգոնի մարդը գաւառի մէջ թիւեր-
քայ իշխանութեան ժամանակ, գիւղացին կամ
քաղաքացին իրաւունք ունէր միշտ իր անշարժ
կալուածները ծախել այնպէս, ինչպէս շարժական
ինչք և 2) Թէ ժողովուրդը, մշական, հողի մեծ
և շատ մեծ սպակտութիւն էր զգում: Իրերի այս
վիճակի մէջ թիւերը-ուսուս պատերազմի արդեամբ,
ուսուս գրաւում է այս կողմեր և բաղմամբ թիւեր-
քեր սկսում են դաղթել դէպի ծովանաւ երկիր:
Եւ թիւերից ոմանց դաղթելով, միւսների հա-
մար, ուրեմն, պարապ տեղ է մնում, որուն այն-
չափ կարօտութիւնն է զգացվում: Ահաւասիկ բաց
տեղ է բացվում, և օսմաննա կառավարութեան
ժամանակից դիտեն որ կարող են գնել, ուստի
ինչպէս ժողովուրդը ուրախութեամբ չը գնէ այդ
Խնչպէս չը գնէ գիւղացին, որ անընդհատ իր տա-
րեկան ապրուստի համար մշակելի հողի պակա-
ւութիւն ունէ, որ այդ ծախելի տեղը—իրան
մի կտոր արտին կամ պարտեղին կից է, իրան

ամեն կերպիւ յարմար և դիրքին է և եթէ ինք չը
ձեռք ձգէ, շատ ուրիշներ պատրաստված են դե-
րաւել և իրան անհաճոյ դրացի գալ: Խնչպէս չը
գնէ քաղաքացին, որ իր բնակութեան համար
տեղ չունէ, երբ շատ անգամ մի տեղ տան մէջ,
որպէս սենեակ այնչափ ընտանիք են բնակվում,
Խնչպէս չը գնէ հող, գիւղի մէջ, քաղաքացին,
որ առնելիք ունի գիւղացու վրա և սա պատրաս-
տված լինելով դաղթել, պարտաւորելը գոնաց-
նելու համար ուրիշ բան չունի, կամ եթէ ունի,
թաղցնում է, չէ ցոյց տալիս, եթէ ոչ արտ, պար-
տէզ, մարդ և այլն և եթէ ինքը պարտաւորել չը
վերցնէ այդ իր առնելիք փոխարէն, գիւղացին
ծախում է օրինի վրա և դաղթում է, այդպիսով
իր առնելիքը կորցում, ունանում է Խնչպէս
չը գնէ քաղաքացին գիւղը, որի առնուելը այլ
ևս չէ բանում, որը վաճառականութիւնից այլ ևս
չէ կարողանում իր տան ապրուստը հոգալ և
տեսնում է որ պարապ մնացած երկու կամ երեք
գաղթականի կալուածներից կարող է բուական
արդիւնք ստանալ: Բայց, հոս հարց է ծագում և
այն ալ ոչ անկարեւոր, թէ ինչով է գնում գիւղա-
ցին կամ քաղաքացին այդ կալուածները, որոնք
իրան համար այնչափ հարկաւոր են:—Գիւղացին
եթէ ունի մի սե փող, խնայողութեամբ հաւաքած,
կամ կարողանում է ուրիշ գիւղացիներից կամ
քաղաքացիներից պարտք առնել, այդ վճարում է:
Իսկ եթէ ոչ, հարկաւորը հարկաւորագոյնին դո-
նելու է: Նշանաբանի համաձայն, ծախում է իր
կովը, իր կնիքը, իր տաւաքը, իր գործիքները, իր

կալ կարասիները և անպատճառ առնում է վա-
րկահող կամ պարտէզ: Վասնից նա մտածում է,
որ մի քանի տարուց յետոյ, նա կրկին կարող է
այդ պիտույքները պատրաստել, ունենալ, բայց
հողը ոչ մի կերպով չէր կարենայ: Իսկ քաղաքա-
ցին, եթէ դա վաճառական կամ արհեստաւոր է,
իր ամբողջ պատրաստի փողը, դրամալիւրը
վաճառում է այդ կալուածի վրա, եթէ ոչ, նա աշ-
խատում է փոխ առնել, հաղարարների մէջ, մի
քանի ունեւորներից, բաւականի գումար, իսկ եթէ
այդ ալ չէ յաջողում, այն ժամանակ նա վեր է
առնում իր կնիքից նրա թանկագին զարդերը, իր
և նորա հարսանեաց կամ այլ նոր զգեստները,
ծախելու յարմար կալ կարասին, մի խօսքով,
այն ամեն ինչ, առանց որոյ նա կարող է, թէ է
լինի դա խեղճօրէն, ցրտից և տաքից պատապար-
վել, նստել, բալել, ուտել և գործել, նա չէ գո-
հում կալուած գնելու համար:

Ահա այսպէս, ուրեմն, Արգոնի գաւառից դաղ-
թող թիւերըք հողերը անցնում են մնացողների
ձեռքը, մեծ մասը կանխիկ փողով վճարվելով:
Թէ քաղաքացիք, և թէ գիւղացիք աճապարում են
գնել գաղթականաց հողերը, տները և այլն: Մի
գորտու պատճառ ալ այդ կալուածների վաճառ-
ման այն եղաւ, որ գաղթականութեան պատճա-
ռաւ դրանց գնելը, սովորական արժողութիւնից
շատ ցած իջան, և ժողովուրդը իրան անսովոր
աճանութիւն տեսնելով, չը խնայեց իր վերջին
լուծան դրա վրա:

Բայց ինչ է անում այդ միջոցին տեղական

կառավարութիւնը:—Կառավարութիւնը, բարձր
իշխանութիւնից ստացած հրամանների համա-
մատ յայտարարութիւններով, մասնաւոր, կամ
պաշտօնական կերպիւ, գիւղացուն, չը գնել
գիւղերի մէջ գաղթականաց անշարժ կալուածնե-
րը: Կրկին և կրկին անգամ նա ծանուցանում է
այդ, հրատարակում է ժողովրդի մէջ, բայց միշտ
չէլքը գիւղը պահելով գնողի ու ծախողի մէջ:
Սակայն թէ գիւղացի և թէ քաղաքացի հասարա-
կութեան մէջ, շատ քիչերն են որ հաւատք են
ընծայում այդ գործադրուիչ յայտարարութիւննե-
րին, արգելքներին: Ժողովուրդը մտածում է, թէ
կառավարութիւնը իր օք ինչպէս կարելի է որ
արգելք սահմանած լինի գիւղի կամ քաղաքի մէջ
արտ գնվելուն, քանի որ այդ է նրա կեանքի,
ապրուստի առաջին միջոցը, առանց նորան նա
ալ ևս կեանք չունի, հնար չունի ապրելու: Նա
չէ կարծում թէ կառավարութիւնը իր սպաւ-
նալիքը կը կատարէ և իրա ամբողջ կարողութիւ-
նը գործելով գնած մի փողը արտը, մի փողը մար-
գը, կամ պարտեղը, իր օք ինչպէս կարելի է որ
Չէ, խորհում էր ժողովուրդը, այդ արգելք մի
առժամանակեայ սպառնալիք է բնակիչներին,
որպէս զի արտը չը գնին այս ինչ կալուածքը,
որ նա ևս հարկաւոր չը գաղթել. բայց երբ
գաղթականութեան վերջնական ժամանակը լրա-
նայ, կառավարութիւնը տեսնելով որ մի քանի
գիւղացիք կամ քաղաքացիք իրանց շատ քաղա-
ւոր—մի քանի կտոր տեղ են գնել քաղաքում

միայն պրիստավի օգնականի պաշտօնը և չը նա-
յելով գործերի շատութեանը—այնու ամենայնիս
կատարում էր բոլոր պարտաւորութիւնները ճշը-
տութեամբ։ Լաւ կը լինէր, իմ կարծիքով, որ պը-
րիստավի համար որոշեալ 720 ռուբլի գումար
հասարակութիւնը յատկացնէր ուսումնարանների
բարեօրոշմանը, պրիստավը, մեծ մասամբ դաւաճա-
պետի յանձնարարութիւններով չըջում է դաւա-
ճում նորա առաջարկութիւնները կատարելու-
իսկ մեր փոքրիկ քաղաքային հասարակութեանը
կը բաւականացնէ օգնականը։

Սարգիս Գասպարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր երկկիսի համարում մենք յիշեցինք ուս-
մանականակից դուր ինքնագործի մասին։ Այժմ
մենք կուզենայինք յիշել այստեղ ուսման օր-
կակից այն գործերի անունները, որոնք հետա-
գոտելով ժողովրդական կեանքը և մասնաւոր
գիւղացու կեանքը, նրանց գրեականները, եթէ ու-
սումնասիրեն մեր հայ մամուլի գաւառական թըղ-
թակիցները, կարող են օրինակելի համարվել և
մեզ համար մեր ժողովրդի, մասնաւոր մեր գիւղ-
ացու կեանքը բազմակողմանի կերպով ուսումն-
ասիրելու համար։ Այդ գործերի ազդանունները
հետեւեալներն են։ Ինքնագործ, Ֆելքովսկի, Սօֆո-
լով, Գօլովաչով, Ուսպենսկի, Նաւոմով, Ջլատո-
վրատսկի և Ֆելքովսկի, նոյնպէս մի գործ, որ
ստորագրում է Վ. Վ. տառերով։ Այդ բոլոր հե-
ղինային գրեականները ընթերցողը կարող է
գտնել ուսաց հետեւեալ ամսագիրներում։ «Оте-
чественный Записки», «Учитель» և «Наблюдате-
ли» ամսագիրներում, որոնց ուղղութիւնը գը-
խառնապէս ժողովրդական է և որոնք իրանց
նուրբեր են ժողովրդի կեանքի ուսումնասիրու-
թեանը։

Շարաթ օր, սեպտեմբերի 18-ին երկուշաբթի 9
ժամին, զինուորական պահապանները թիֆլիսի
փողոցներով տանում էին դատարանից Մեթեխի
բերդը հօթ հողի շղթայակապ աւաղակներին։ Հաս-
նելով Միքայելեան կամուրջին, կալանաւորներից
երեք հոգի փախան դէպի կամուրջին կից սղո-
ցագործների փողոցը, ինչպէս երևում է մի հնար-
քով կանխապէս թուլացած լինելով իրանց չըղ-
թանքը։ Պահապան զինուորները և այդտեղ գտն-
ված պօլիցիականները սկսեցին հրացաններ և բե-
վառներն արձակել փախչողների վրա։ Փախչող-
ներից երկուսը անմիջապէս սպանվեցան, իսկ մե-
կը վիրաւորված լինելով, ջուրն ընկաւ և լող տա-
լուց յոգնելով կրկին ափ դուրս եկաւ հանգս-
տանալու, բայց անմիջապէս կալանաւորվեցաւ։

կամ գիւղերում, ալ ձայն չի հանի, և այսպէս
իրանք տէր կը մնան կալուածներին, որոնցով ի-
րանց ապրուստը փոքր ի շատէ ապահովված
գրութեան մէջ կը լինի։ Եւ այս մտածութիւննե-
րի հիման վրա ժողովուրդը գնեց գաղթական
թիւրքերից մնացած հողերը։

Հնչեց վերջապէս գաղթականութեանց յետին
ժամը, հասաւ 1882-ի փետրուար 3-ը։ Եւ գիւղա-
կան ու քաղաքի հասարակութիւնը յուսոյ և եր-
կիւղի տաքնապի մէջ սպասում էր կառավարու-
թեան ձեռնարկութեանը։ Եւ ահա տեղական իշ-
խանութիւնը, մի ըստ միով, որչափ կարելի
է, գաղթականաց կալուածները մանրամասն զըն-
լուց յետոյ, յայտարարութիւններ հրատարակեց
թէ գաղթական թիւրքերից մնացած հողե-
րը, աճուրդով վարձու կը տրվեն, մի տա-
րուան համար, և առ հասարակ ամեն ցան-
կացող կարող է առնել վարձով։ Բայց գնող-
ների յուսահատութիւնը այն ժամանակ կա-
տարեալ եղաւ, երբ արդէն մի տարի, երկու տա-
րի ապագայի մէջ եկամուտն աւելացնելու յուսով,
իրանց խնամով հողացած պարտեզները, աճուրդի
մէջ ուրիշի ձեռք անցած և նորանով ուրիշը օգտ-
ւով անյարմար է և անօգուտ։
Այն գիւղացին, որի յետին ա-
պաստանարանն էր դա, այլ ևս մի կօպէկ
կարողութիւն չունէ վարձով բռնելու, վասն զի
առանց այն ալ իրանից ունեւորները, վարձու
գինը աւելացնում են աճուրդի մէջ։ Այն
քաղաքացին, որ իր բովանդակ կարողութիւնը,
ինչպէս վերը տեսանք, զոչեց այդ կալուածը գնե-

թիֆլիսի մի քանի փողոցները անտանելի
գրութեան մէջ են գտնուում։ Օրինակի համար
Արսէնալի շօնէն այնպէս խանգարված է, որ
կառքերը կատարելապէս ընկնում, չուռ են գա-
լիս։ Իսկ գիւղերով ամենեւին հնար չը կայ այդ
փողոցով անցնելու։ Մի և նոյն գրութեան
մէջ են և Հաւաքարը ու Սաղի փողոցնե-
րը։ Քաղաքային վարչութիւնը կատարելապէս
անհոգ է այդ մասին և երևի զբաղված է իր հա-
մար աւելի կարեւոր գործերով, որովհետեւ ընտրու-
թիւնների ժամանակը մօտենում է։

Հաւաքարի օրորոցայ Ս. Մարիամեան զարդի
տեսուչ, պ. Կ. Թէմուրազեան ուղարկել է մեզ
հետեւեալ նամակը։ «Ձեր լրագրի վերջին համար-
ներից միւսի մէջ համակրական կերպով խօսելով
մեր զարդի մասին, դուք ձեր նկատողութեան
մէջ մի սխալ էք արել, որ թոյլ տուեցէք ինձ
նոյն իսկ ձեր յարգելի լրագրի միջոցով ուղղելու։
Գուք հաղորդել էիք որ մեր զարդի երրորդ դա-
ստան աշակերտութիւնը մտնում են Գայեա-
նեան և Անանեան զարդների երկրորդ և երրորդ
դաստան, այն ինչ Հաւաքարի Մարիամեան
զարդի երրորդ պատրաստակաւ և դաստան
աշակերտութիւնը ընդունվում են յիշեալ զարդ-
ների երկրորդ դաստաններում։ Յոյս ունեմ որ կը
բարեհաճէք այս փոքրիկ սխալն ուղղելու»։

ԲԱՎՈՒՅՑ մեզ գրում են։ Այստեղ կարգադ-
րված է գործարաններում տիրող ծուլը, որ բացի
ամեն բան սկսեցնելուց, օգն էլ է ապականում,
ոչնչացնել, ինչպէս Նօրէի գործարանում, չորի
միջոցով։ Այդ միջոցները կը գործադրվեն առա-
ջիկայ տարվանից։

Սեպտեմբերի 15-ից մեզ գրում են Բազուկից
հետեւեալը։ «Երեկ եկած սաստիկ անձրեւից հե-
ղեղներ գոյացան։ Ջուրը փողոցներում այն աս-
տիճան բարձրացաւ, որ մի քանի ժամ շարունակ
անցուղաքձ անելը անհնարին եղաւ։ Մի քանի
ներքնատներ և գինեկաճառների խանութներ
ջրով լցվեցան։ Փողոցում անցնող կառքերից
երկուսը կտրվեցան»։

Մենք ստացանք քաղաքային փոստով հետեւեալ
նամակը պ. Մ. Սաղաթիւնեանցից, որ պարոնը
խնդրում է մեզ տպել մեր լրագրի էջերում «Ի-
մասնով լրագրիցներից Խարկովի համալսարանի
պրօֆէսոր և բժշկապետ պ. Շիլիանի թիֆլիս
գալու մասին, եւ ի թիւս շատերի, շտապելի
գինը նրան, օգնութիւն խնդրելով իմ աւագ որ-
դուս համար, որ վտանգաւոր կերպով հիւանդ էր
և որին տեղիս բժշկները մի ամբողջ ամսոյ ըն-
թացքում ոչինչ հնարքով չը կարողացան բժշկել։
Երեկային տեսնելով, պ. Շիլիանց մօտ կէս ժամ
ոտքից մինչև գլուխ բժշկական հետազոտութեան

լու, այժմ ոչ խանութ ունի, ոչ փող, իւր րա-
քան չիւր տարի աճուրդի մէջ վարձով բռնե-
լու, որտեղ արդէն իր նախանձորդները յար-
մար առիթն են գտնում ոյս հանելու։ Շատ
մարդիկ, որոնք տարիներով օտարի զը-
նեւում, ծառայութեան մէջ կեանք մաշելով հա-
ւաքած մի քանի ռուբլւս տուած էին հողին,
բոլորովին կորցնում են այդ փողը և իրանք ձեռ-
նուհայն մնում են կարօտ օրական պարէնի,
իրանց բազմաթիւ ընտանիքով։

Կառավարչապետ իշխան Գոնդուկով-Վորսակո-
վի այցելութեան միջոցին, ամեն գիւղ, իր կող-
մից մասնաւոր խնդիրներ ներկայացուց այդ մա-
սին, սակայն, որչափ ինձ յայտնի է, դեռ չէ
պատասխանած իշխանը։

Իրերի վիճակը, այսպէս նկարագրելուց յետոյ,
թոյլ ենք տալիս մեզ մի քանի խորհրդածութիւն-
ներ ալ անել մեր կողմից այդ ժողովրդական
գրութեան մասին։

Կառավարութիւնը գաղթականներից մնացած
հողերը, կալուածները, մի տարի վարձով կը
տալ, աճուրդի մէջ, ցանկացողներին։
Բայց այդ կարգը երեք գլխաւոր կէտով նկատե-
լով անյարմար է և անօգուտ։

Առաջին, որ, ինչպէս վերը նկարագրեցինք,
գաղթականաց կալուածները գնող աղքատների
համար ամենաթշուառ վիճակ կը մնայ, եթէ դո-
քա, այդ իրենց կարողութեան վերջին կաթիլը
քամած ստացուածներից գոնէ փոքր ինչ օգուտ
չը տեսնեն։ Գուք, համարենք թէ մի տարի կա-

նթարկեց նրան, այն ինչ մեր բժշկներից շատե-
րը երկու րօպէ էլ չեն մնում հիւանդի մօտ, և
մանրամասն հարցեր ինձ առաջարկելով հիւանդի
վերաբերութեամբ, վերջացրեց իր հետազոտութիւ-
նը ասելով թէ մի քանի օրում կատարելապէս կը
բժշկի երկնային։ Այդ լսելով իմ ուրախութեանը
չափ չը կար։ Եւ իրաւ մի շարժից յետոյ որդիս
անսպասելի կերպով կատարելապէս առողջացաւ,
չնորհիւ այն դեղերի, որ պատուիրած էր բժշկա-
պետը։ Այդ պատճառով սեպուս պարտականու-
թիւն ևս համարում ինձ համար յայտնել պրօֆէ-
սորին, ձեր լրագրի միջոցով, իմ յօդին և ի բոլոր
սրտէ հնորհակալութիւնը»։

Թիֆլիսի հայոց թատրոնական խումբը խնդ-
րում է մեզ յայտնել որ վաղը, 23-ին սեպտեմբե-
րի, հինգշաբթի օրը, խումբը ներկայացնելու է
Արթուրու թատրոնում Գ. Սոնդրիկանցի «Քան-
դած Օջախ» պիեսան, երեք արարածով։ Երեկա-
յացմանը կը մասնակցի տիկին Շահինեանց, որ
առաջին էր բեմ դուրս եկող հայ կանանցից։
Ներկայացման սկիզբը 8 ժամին է, տեղերը գնե-
րը սովորական են։

Ինչպէս յիշում է ընթերցողը, մենք հաղորդե-
ցինք մեր լրագրում այն լուրը, որ պ. Կ. Թէմու-
րազեանց մի քանի ամիս սրանից առաջ յայտա-
բարութիւններ ներկայացրեց թիֆլիսի Ներսիսեան
զարդի հոգաբարձութեանը մտնվածառութեան
առիթով, հաստատելով որ կապալաւորի վաճա-
ռած մօմը զուտ մեղրամօմ էր, որի ապացոյց
նա ներկայացրեց վկայաթուղթ մի քրմիկոսից,
որին խնդրել էր քրմիկապէս լուծել թիֆլիսում
վաճառվող մօմերը։ Այս յայտարարութիւնների
հետեւան այն էր, որ մտնվածառութեան նոր
կապալը 6 հազար ռուբլուց բարձրացաւ մինչև
13 հազար ռուբլ։ Այժմ մենք կարող ենք ուս-
աց լրագրիցներում անվերջմասի գանգատներ
Խուսափանում կեղծ մեղրամօմերի արդիւնաբե-
րութեան մասին։ Մարաքաղաքի մամուլը յայտ-
նում է որ փոխանակ զուտ մեղրամօմի, այժման
մօմը բաղկացած է շատ անգամ ճարգուցի, ճահ-
ճային տօրֆի պարաֆինից, ցերէսինից, օզօկէրի-
տից և այլ այս տեսակ նիւթներից։ Կեղծ մօմերի
այրման նշաններն են՝ տրաքտրաքիլը, անհաւա-
սար ձևով այրվելը, մեծ քանակութեամբ ծուլը,
որից եկեղեցական պատկերները միանգամայն
սկանում են։ Օրէնքների համաձայն ամեն տեսակ
խարդախութիւն մեղրամօմերի վերաբերութեամբ
խտտութեամբ պատմվում է։ Լրագրիների կարծի-
քով այդ տեսակ անհարազատ և կեղծ մօմերի
գործածութիւնը կատարելապէս կոչնչացնէ մե-
ղրաւորութիւնը։

Ուսուցչական ժողովի կողմից 35 անձինք, ո-
րոնք պէտք է կազմէին ծխական և թնամական

բողոքիւն ունեցան վերառնել վարձով, աճուրդի
մէջ, բայց այնուհետեւ, ով կարող է ապահովել
նորանց օտարների շահանջողութեան դէմ մասնա-
ւանդ ամեն տարուայ աճուրդի մէջ։

Երկրորդ, եթէ այդ կալուածները, դատ,
դատ մարդու ձեռք անցնեն ամեն տարի, այդ
վարձակները, որոնք ամենեւին զիտաւորութիւն
չեն ունենայ երկրորդ տարուան համար վարձե-
լու, և անխնամ կը թողնեն կալուածը անխիճ
կերպով ամեն փոքրիկ եկամուտը խլելուց յետոյ։

Իսկ այդ կերպով, գաղթականաց կալուածները ա-
մենակարճ միջոցում, այժմեան տուած եկամուտի
քառորդն իսկ չեն բերի։ Մի այդպիսի գործ, նոյն
իսկ տնտեսական եկամուտին ալ զիւս է, քանի
որ այդ կալուածներից վարձագին է առնում և
ստանալու աշար է հաւաքում։ Թողոք է մի
քանի այլ անտեղութիւններ որ կարող են պա-
տահել կալուածների հարկաւոր ժամանակ, կար-
գաւորեալ կերպով չը խնամվելուց։

Երրորդ, նոյն իսկ տեղական իշխանութեանց
համար ահապին աշխատանք և ժամանակի կո-
րուտ է, ամեն տարի 1700-ի մօտ գաղթական
տների կալուածները մի առ մի աճուրդի հանել
և հարկաւոր եղած գրութիւնները կատարել։

Գեռ ևս չենք յիշում մենք այն կոխները, որ
կարող են պատահել յուսահատված գնողների և
վարձակների մէջ։ Այդ կոխները, որոնք եթէ
չեմ սխալվի, իմ ժողովրդին ճանաչելու մէջ, յա-
ճախակի կը պատահեն, քննութիւնների, աշխա-

զարդների ու զարանոցների ծաղիրները, ինչպէս
յայտնի է, կազմեցին միմիայն ծխական, չորս
տարուայ դաւնթացքով, զարդների ծրագիրը,
որ և վաւերացվեցաւ ընդհանուր ժողովից։ Բայց
ժողովի փակվելուց յետոյ 35 անձինքներից կաղ-
մած յանձնաժողովը չը լուծվեցաւ, այլ թիֆլիսից
հեռացած անձինքների փոխարէն, որոնք յանձնա-
ժողովի անդամների մեծամասնութիւն էին կաղ-
մում, ընտրվեցան թիֆլիսի հայոց զարդների
մէջ գործող անձինք։ Բացի այս յանձնաժողովից,
ընդհանուր ուսուցչական ժողովը ընտրել էր
նոյնպէս մի մասնաժողով մեր զարդների և ու-
սուցիչների ապահովութեան մասին խորհե-
լու և միջոցներ որոնելու համար։ Այդ մասնա-
ժողովին հրաւիրված են և դրսի մարդիկ, բան ա-
ղէտն էր (էկսպերտներ)։ Մինչև այժմ, որքան
մեզ յայտնի է այդ մասնաժողովը միայն մի նիստ
է ունեցել։ Ցանկալի է որ մասնաժողովին նախա-
գահը միշտ մի քանի օր առաջ, կանխիկ խմաց
տայ անդամներին և էկսպերտներին մասնաժողո-
վի նիստի օրվայ մասին, քանի որ ամեն մարդ
թիֆլիսում զբաղված է իր գործով և իր ժամա-
նակին մասնաժողովի նիստի մասին տեղեկաց-
րած չը լինելով, կարող է այս և այն պատճա-
ռով բացակայ լինել նիստից։

«Донская Пчела» լրագրում կարդում ենք որ
մեր դերասան պ. Աղամեան այս օրերս հասել է
Բոստով քաղաքը։ Նա դիտաւորութիւն ունի ներ-
կայացուցնելու տալ Բոստովում և Նոր-Նախիջևե-
անում, խաղալով այնպիսի պիեսաներում, ինչ-
պէս «Համէտ», «Ոճրաբորժի ընտանիք» և այլն։

Պ. Հ. Սարգսեանց հաղորդում է մեզ հետեւեալ
անսովոր երեւոյթի մասին։ «Երբ մի ամիս սրա-
նից առաջ եւս այցելեցի թիֆլիսից ոչ հեռու
գտնվող մի գիւղ, եւս ակնատես եղայ հետեւեալ
անսովոր երեւոյթի. մի հաւ մի սովորական ձուռի
մեծութեանից երկու անգամ աւելի մեծ ձու էր
դրել. երբ կտրեցինք այդ ձուն, նրա միջից յայտն-
վեցաւ սովորական մեծութեամբ մի այլ ձու»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՊԱԳԱՆ ԵՒ ԲԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Այս վերնագրով «Голосъ» լրագիրը
տպել է հետեւեալ յօդուածը։ Անգլիացի-
ները իրանց կատարեալ իշխողներ են հա-
մարում Եգիպտոսի վրա և այդ զղացմունքը
նրանք բացարձակ յայտնում են, ցոյց տա-
լով թէ իրանք վճռել են ձեռքից չը թող-
նել Ուէլսէյի յաղթութեան պատճեններից և
ոչ մէկը։ Թիւրքերի Եգիպտոս դնալու մասին

տոթիւնների ընդարձակ դուռ կը բանան տեղա-
կան կառավարութեանց համար։

Ուստի, ինչպէս կարելի է այս ամեն անյար-
մարութիւնների առաջն առնել։ Եւ համարձակու-
մ և մտածել, որ եթէ չէ կարելի դադրեալ ա-
կանն երկ անցած կալուածները՝ դը-
ն ողն երկ սեպականութեան ներքե
թողնել, գոնէ կարելի է դորանց և յատկա-
պէս դորանց վարձու տալ, երկայն ժամանա-
կեայ տեղութեամբ, ամենաբարձր 7—8 տարիով։
Եւ այդ կերպով վերս յիշուած հաւանական
շեղաների մեծ մասամբ առաջն առնված կը
լինի։

Եթէ առիթ հանդիպի, մենք այս մասին կը
վերադառնանք խօսելու։ Սակայն, այժմէն, յոյս
ունենք որ, որովհետեւ այս կալուական խնդիրը
այս կողմերի համար կենսական հարց է դարձած,
չէր խնայի ձեր էջերը մեր այս յօդուածին։ Նոյն-
պէս և «Кавказъ» լրագիրը կը բարեհաճի սորա
զիւսաւոր պարունակութիւնն արտատպել։ Հարցը
վճռվելու վրա է և պէտք է որ մամուլով արտա-
յայտենք մեզ ծանօթ եղած իրականութիւնը։

Առաքել Սարգսեանց

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նորաշէնու սուրբ Մարիամեան օրիորդաց Հոգաբարձութիւնը, համաձայն օրագրի 'ի 20 սոյն սեպտեմբերի, պատու ունի յայտնել 'ի դիտութիւն ամենեցուն, որ սա առաջիկայ կիւրակէ, վարագոյ Սուրբ Խաչի տօնին, այն է 'ի 26 ամսոյս ունի կատարել Նորաշէնու սուրբ Աստուածածնայ եկեղեցում յիշեալ ուսումնարանի բարերարաց Սողոմօն Կուզանեանցի եւ Գանիէլ Իգմիրեանցի հոգեհայտնութեամբ վասնորոյ վարչութիւնը խնդրում է ցանկացողներին շնորհ բերել պատարագին 9 ժամին:

Տեսուչ ուսումնարանի Ջաշիտեանց

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ֆինանսների միւնիստրը 1881 թուի ապրելի 20-ին հաստատած թիֆլիսի հասարակութիւնից 7500,00 ռուբլ գումարի օրինաւորներ հրատարակելու մասին կանոնները 11 յօդուածի հիման վրա ներկայ 1882 թուականի հոկտեմբերի 1-ին առաւօտեան 12 ժամին քաղաքային դումայի դահլիճի մէջ հրապարակօրէն եւ վարչութեան ներկայութեամբ կը կատարվի քաղաքային օրինաւորների հանգումն 7,900 ռուբլ գումարի:

1—3

Նոր ստացվեցան ամենաբարձր ՊԱՊԻՐՈՍԻ ԹՂԹԵՐ արկղիկը 32 կոպէկից մինչև 2 ռուբլ 20 կոպէկ:

Ցանկացողները կարող են գնել 10% ուղարկել, իսկ մնացած գումարը վճարել ապրանքը ստանալուն պէս:

Պահանջողներին ուղարկվում է պրէս-կուրանտ:

Մեր հասցեն. РОСТОВЪ на Дону, Мартиросу ТЕРЪ-АСТВАЦАТУРОВАУ.

2—10

Լոյս տեսաւ Կ. ՍԱՌԱԳՅԱՆԻ «ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ» վերնագրով զրբոյքը: Երեք օրինակից պակաս 25 ռուբլով:

Երեք օրինակի գինը ճանապարհածախով 1 ռուբլ:

Գումարով առնողներին գինը կը լինի 15% մինչև 30%:

Հեղինակի հասցեն. Таганрогъ, Мо-настырская улица, д. Фомина, Сар-гатову.

2—10

ՀԱՅԼԱԲԱՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՀԱՅ ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ աշակերտութիւնի ԲՆԴՈՒՆԵԼԸ սկսվում է սեպտեմբերի 14-ից եւ կը շարունակվի մինչև 25-ը: Հասցեն՝ Լազարեւոյ փողոց, տուն Մէլիք-Շահնազարեանցի:

Տեսուչ զարդի՝ Կարապետ ԹԵՄՈՒՐԱՋԵԱՆՑ

ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԵՐԵՔ ԽԱՆՈՒԹՆԵՐ, որոնք նորոգված են եւ մաքուր են: Մասնին ամբողջ հարկը ԳԻՆԻԻ պահեստի եւ վաճառման համար: Միխայիլովայ փողոց տուն № 111, հարցնել դռնապան ԱՇԵՐԻՆ:

3—3

ԴՊԿՏՈՐ Ա. ԲԱԲԱՅԵԱՆԸ

Միայն ամսոյս 15-ից կտրող է հիւանդները բնակարանները ժամը 9—11, իւր նախկին բնակարանում: Սօլօակ, Սերգիւկի փողոց, Բայրեղեւոյ փողոց: 7—10

ԾԱԽՎՈՒՄ Է ԹԵՅ Կ. Ե. Ս. ՊՕՎԻՆՆԵՐԻ իսկական ֆիրմայից ֆունտերով եւ արկղիկով 1 ռ. 40 կ. մինչև 3 ռ. ֆունտը ընդհանուր 10%: **ԶԻՋՈՒՄՈՎ**: Գար-վանսարայ Արծրունու Սիօնի մայր-եկեղեցու մօտ **ԱԼԽԱԶՈՎԻ** գրասենեակի մէջ № 9:

3—6 (1)

ՍՏԱՅՎԱԾ ԵՆ չը թրջող վերարկուներ 6—18 ռ., կրակեր 3 ռ., գրաֆիներ եւ պատուկներ 25 կ., բաժաններ 7 կ., գրիչներ 144 հատ 20 կ. եւ այլն: ԱՆԳԼԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՃ: Նոյն տեղը ահագին քանակութեամբ վահա, թանաք, փոշիներ մետաղների սրբեր: համար, մեծ քանակութեամբ թէյ առաջին հունձի 1 ռ. 10 կ.—մինչև 2 ռ. ամենաբարձր ֆունտը առանց թղթի: Հրացաններ, ռեվոլվերներ, երեսօրիններ, ալբոմներ, փոստի թուղթ եւ այլն:

10—10

ԲԵԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ բարձր դասա-տան աշակերտ ցանկանում է ստանալ ԳԱՍԵՐ տար: Նմանապէս յանձն է առնում միւ-նոյն ուսումնարանի 1, 2, 3-րդ դասարան-ներին համար աշակերտներ պատրաստել: Հասցեն կարող են իմանալ Գօլօվինսկի պրոս-պէկտի վրա, վարչապետի պեկտի փողոցում, պ. Մարտիրոս Հախնազարեանցի:

5—5

Ինժեներ-ՏԵԽՆԻԿ յան է առնում կա-մէլ քաղաքի բնակարանների եւ ամարանոց-ների ՅԱՍԱԿՅԱՆ (ПЛАНЫ) Ե ՏԵՍԲԵՐ (ФАСАДЫ) նոյնպէս վերահսկողութիւն շի-նութիւնների ժամանակ: Հասցեն կարելի է իմանալ «Մշակ» խմբագրատանը:

ИНЖЕНЕРЪ-ТЕХНИКЪ беретса составлять ПЛАНЫ и ФАСАДЫ го-родскихъ и дачныхъ домовъ и ру-ководить РАБОТАМИ. Адресъ мож-но узнать въ редакціи «Мшакъ»

7—10

ՐԱՅՅԻ

ԽԱՄԱՅԻ

ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԻՆԵ Է 1 Ր. 50 Կ.

Գրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է՝

«Մշակ» խմբագրատանը. — Կենտ-րոնական գրադաճառանոցում: Միւնիստրի տանը № 3 Ե 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի «Կովկաս-ական գրադաճառանոցում»: — Պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում: — Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում:

Օտարաքաղաքացի կարող են զիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետեւել հասցեով: **ТИФЛИСЪ. Редакция «Мшакъ» РАФФИ.**

Յանձնուեցաւ մամուլին մեր

«ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ» ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՅՑ ԳԱՍԱԳԻՐՔԸ

ԵՒ ԼՈՅՍ ԿՐ ԽԵՆԻՆ ԴԻՆԵ ԺԱՄԻՆ ՎԵՐՋԸ:

Յ. Նազարեանց

ԹՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

սիստեմատիքական ընթացք

Գրիգորի վարձերեան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր)

Մամուլի տալին է եւ սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր եւ երրորդական կանոններ):

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%: Ծախվում է վ. Շահինեանցի քաղաքական գործակալութեան խանութում:

Օտար տեղերից զիմում են այս հասցեով **ТИФЛИСЪ, въ Агентство В. Шавердо-ва:**

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԵԿԵՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎ ԵՒ ՎԻԵՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖԻԱՆՍԵՐԵՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

«Ժուրնալ դ'Օրիան» քաղաքի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

«L'Oriental» թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:

Գրվել կարելի է «ՄՇԱԿ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի վիեննայում զիմել հետեւալ հասարակ հասցեով. **Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.**

Միջի փողոց, Կաթօլիկ շէնակայա փողոցի անկիւնն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆԱՅԻ ՄԵԿԵԼ ամե-նայն տեսակ, ֆրանսիական եւ անգլիական երկաթէ կՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ռ., չա-մադաններ 250—25 ռ., սակօյաժներ 1. 30—12 ռ., սոււն զուկն եւ ձա-նապարհի 6—35 ռ., մարմններ (погребцы) 6—25 ռ., սա մօ վարներ 60 կ.—1.25 ֆունտը, կուսման պրիճէ ամաններ, Գերմանիայի երկաթէ հանրով ամաններ. ու մի վա շին կն եր մր մօ րն ի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լուսանի 6—32 ռ., Եվրոպայի երկաթէ ամանայն տեսակ 3. 50—30 ռ., պատրաններ. (գուլաններ) ռեվոլվերի, սիգար Ռենգարդի ֆարրիկից. պապի-րոս եւ թամբաբու կուշնարովի գլղի պապիրովի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՅ (չոյ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԻՐԻ, բնակիւմ. (սուխար չոյու եւ կաֆէի) Էրնեմի. Կօֆէ Էրնեմի եւ Միխեյսնի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայկիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրոբկայ գինեկաճառների, հանքային եւ դարեճի (для заливочныхъ водъ и пива) զուլթուկ (пучк), զուլթուկներ սամուրի չոյու, դանակ չանգալ զանազան ֆարրիկների 1 ռ. 20 կ.—25 ռ. գուլանը. գրչակներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջրի 1—60 կ.—12 ռ., դա-նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուսման 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կորելու մաշիկը. Անգլիական ու թոններ, Բրիտանիայի չոյիկներ, կաֆէ-նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—Ջուր մաքրելու, կրամալ կարթիկ 18 կ., փաթ ֆրանսիայի ծախյ, թուղթ փոշու, կանկերու-ներ, սուրբուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակ, քարեմատալ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գրչակներ սեղանի եւ չոյու ֆրաճէ, վարչակի եւ բրիտանիկի գուլանը 1—50 կ. մինչև 12 ռ., եւ չոյու 45 կ.—5 ռ., չու-միչէէ 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պո-սապոշկաններ վարչակ, Ռեզիսի ԿԱԼՕՆԵՐ, ամեն տեսակ, գուլաններ կա-նանց եւ մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, չապիկներ, մարդկերանց գալուս-տիկներ, գնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, սնձրի եւ չոյի. սանդղի շի-մուլու ոսկորէ, գուսպալերովի եւ փայտէ, շոտկաններ զլիկ, շոյի, սապոլի, պոլի եւ կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատիկի կօճի եւ չալի (гарь) ֆէ-չատիէ մարդկերանց եւ կանանց, պորտմաններ, քրտաներ, պապիրոսի ամաններ եւ մանր գոյանտերիկի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտապէտ ջրեր, պուրա, Գլիցերին ջրի քաջալ, հոտապէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՐԱՏՈՐԻՅ. Ե այլն եւ այլն եւ այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով եւ զիջումով վերցիլեալ ապ-րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻԲԱՅԻԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-կիւնում № 13.

Օտարաքաղաքացի կարող են զիմել հետեւեալ հասցեով. **ТИФЛИСЪ Ми-хаилу Н. Теръ-Никогосову.**

139—180

Միջի փողոց, Կաթօլիկ շէնակայա փողոցի անկիւնն № 13.